

ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանի «Բյուզանդական X-XI դդ. պղնձե դրամները և դրանց շրջանառությունը Հայաստանում» թեկնածուական ատենախոսության մասին

Հայոց պատմության միջնադարյան շրջանի ուսումնասիրության այժմյան փուլում, երբ գրավոր սկզբնաղբյուրների տվյալները գրեթե ամբողջովին հրապարակի վրա են և մեծ մասամբ ուսումնասիրված, առաջնային նշանակություն է ստանում նաև պատմության օժանդակ գիտաճյուղերի տվյալների ներգրավումը, որոնցից է դրամագիտությունը: Այս առումով, արդիական թեմա է հետազոտել Հասմիկ Հովհաննիսյանը՝ հրապարակային պաշտպանության ներկայացնելով «Բյուզանդական X-XI դդ. պղնձե դրամները և դրանց շրջանառությունը Հայաստանում» թեկնածուական ատենախոսությունը:

Հենց սկզբում նշեմ, որ աշխատանքը կատարված է գիտական բարձր մակարդակով և մասնագիտական հմտությամբ, դրամագիտական հսկայական նյութի հանգամանալից ուսումնասիրությամբ, որը վկայում է տևական և ջանադիր աշխատանքի մասին:

Ուսումնասիրողի նպատակն է եղել X-XI դարերում թողարկված բյուզանդական պղնձե դրամների պատկերագրական, ոճական, չափագիտական և հայտնաբերման հանգամանքներին վերաբերող տվյալների համալիր քննությունը, ուսումնասիրվող դրամների դասակարգման և ժամանակագրության մեջ ճշգրտումներ կատարելը, բյուզանդական ֆոլիսների Հայաստան ներթափանցելու ուղիներն ու շրջանառությունը ներկայացնելը: Աշխատության կարևոր հարցերից է «անանուն» կոչված ֆոլիսների դասակարգման և ժամանակագրական հաջորդականության՝ ցայժմ չպարզաբանված հարցերի քննությունն ու համակարգված լուսաբանումը: Աշխատության մեջ հետազոտված են նաև դրամահատարանների տեղի, ֆոլիսների տնտեսական նշանակության ուսումնասիրմանը վերաբերող և այլ հարակից հարցեր:

Ատենախոսությունը գրված է հիմնականում դրամագիտական նյութի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա, բայց նաև հնագիտական տվյալների,

գրավոր սկզբնաղբյուրների տեղեկությունների, և տարբեր գիտական ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությամբ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթաբաժիններով, եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածից, որի մեջ ներառված են հապավումների ցանկը, աղյուսակները և լուսանկարները:

Ներածությունն արտահայտում է թեմայի արդիականությունը, աշխատության նպատակը, խնդիրները, գործնական նշանակությունը, հետազոտության մեթոդաբանությունը: Տրված է նաև օգտագործված գրականության տեսությունը, որը վկայում մեզանում այս թեմայի շատ քիչ ուսումնասիրված լինելու մասին:

Առաջին գլխում ներկայացվում են բյուզանդական պղնձե դրամների թողարկման առանձնահատկությունները, քննարկվում են անանուն ֆոլիսների թողարկման նախադրյալները, նաև՝ անանուն ֆոլիսների վերաբերյալ ուսումնասիրություններում առկա տարբերությունները: Այս բաժնում հեղինակը Հայաստանում հայտնաբերված նյութի մանրակրկիտ հետազոտության շնորհիվ անանուն ֆոլիսների դասերի ժամանակագրության մեջ որոշ լրացումներ և ճշգրտումներ է կատարել:

Երկրորդ գլխում ներկայացված են ֆոլիսների պատկերագրության խնդիրները՝ համաժամանակյա ոսկե և արծաթե դրամների պատկերագրական օրինաչափությունները և առանձնահատկությունները, դրանց և պղնձե դրամների միջև եղած կապերը: Այստեղ քննվում են դրամների վրա Քրիստոսին պատկերելու կանոնիկ սկզբունքները, որը կարևորություն ունի հատկապես անանուն ֆոլիսներ թողարկած կայսրերի բացահայտման և դրանց ժամանակի որոշակիացման գործում:

Երրորդ գլխում ներկայացվում են տվյալ ժամանակաշրջանում բյուզանդական դրամների՝ Հայաստան հոսքի ուղիները և երկարատև շրջանառության պատճառները: Դրամների շրջանառությունը դիտարկվել է երկու փուլով՝ ֆոլիսների Հայաստան ներթափանցումը—և դրանց վերաշրջանառությունն ավելի ուշ ժամանակաշրջանում:

Եզրակացությունների բաժնում ի մի են բերվում ուսումնասիրության արդյունքները և կատարվում համապատասխան եզրահանգումներ:

Աշխատությունն աչքի է ընկնում քննված հարցերի ամբողջականությամբ, որոնց տրվում են սպառիչ պատասխաններ: Ուշագրավ է նոր բնույթի ֆոլիսների ստեղծման բացատրությունը՝ որոնց դիմերեսին կայսեր պատկերի և անվան փոխարեն ներկայացվում էր Քրիստոսը, իսկ դարձերեսին՝ միայն Հիսուս Քրիստոսի անունը: Այստեղ նորույթը կայսեր անվան բացակայությունն էր, որը պղնձե դրամների շրջանառությունն ընդլայնելու միտում ուներ: Եվ իրոք, այդպիսի դրամները, մասնավորապես Հայաստանում կարող էին ընկալվել որպես «քրիստոնեական»: Պատահական չէ, որ դրանք շարունակեցին երկրում լայն տարածում ունենալ նաև տարածաշրջանում Բյուզանդական կայսրության դերի նվազման ու իսպառ վերացման շրջանում:

Աշխատության մեջ դրամների տիպաբանական ուսումնասիրությամբ բացահայտվել են անանուն և կայսրերի անունը կրող համաժամանակյա ոսկե, արծաթե և պղնձե դրամների միջև եղած կապերը և տարբերությունները, մի շարք ճշգրտումներ են կատարվել անանուն ֆոլիսների 11 դասերի թողարկումների վերագրման մեջ, բացահայտվել են որոշ պատկերագրական տիպերի ընտրության շարժառիթները և այլն:

Ուսումնասիրությունը կատարված է նյութի խորը իմացությամբ, առկա մեծաքանակ դրամագիտական նյութերի համակողմանի և այլ սկզբնաղբյուրների տվյալների վերլուծությամբ:

Աշխատությունն ունի կուռ կառուցվածք, միանգամայն համապատասխանում է գիտական աշխատանքի չափանիշներին, իսկ հեղինակն աչքի է ընկնում քննական, վերլուծական մտածողությամբ և փաստերով ու փաստարկներով հիմնավորված եզրահանգումներ կատարելու կարողությամբ:

Ատենախոսության մեջ քննված հարցերի վերաբերյալ ես հիմնական դիտողություններ չունեմ, բայց մի հարցի վրա ուզում են հրավիրել հեղինակի ուշադրությունը: Ներածության մեջ՝ գրականության տեսության բաժնում, նշվում է. «Խաչատուր Մուշեղյանը «Դրամական շրջանառությունը Հայաստանում» գրքում, մեկ էջի շրջանակում, խոսում է բյուզանդական ֆոլիսների մասին: Նա այս դրամների թողարկման վերաբերյալ առաջ է քաշում վարկած, ըստ որի՝ Հայաստանում, մասնավորապես Անիում հայտնաբերված մեծաքանակ դրամները հնարավոր է

տեղական թողարկումներ են: Այս վիճարկելի տեսակետը տեղ է գտել Խաչատուր Մուշեղյանի այլ հրատարակություններում ևս» (ատենախոսություն, էջ 10):

Սպասելի էր, որ բուն աշխատության մեջ այս հարցին կրկին անդրադարձ լինելու է, և այն իրոք կա, սակայն 132-րդ էջի տողատակում: Այն հետևյալն է. «Խաչատուր Մուշեղյանը, իր մի շարք աշխատություններում անդրադառնալով Անիում հայտնաբերված մեծաքանակ բյուզանդական պղնձե դրամներին, գրում է՝ «Հավանական է, որ դրանք թողարկվում էին նաև Հայաստանում, մասնավորապես Անի քաղաքում, նամանավանդ երբ վերջինս 1045 թ. անցել էր բյուզանդացիների ձեռքը: Հիրավի, Հայաստանում գտնված բյուզանդական պղնձյա դրամների մեծ մասը թողարկման ժամանակով վերաբերում է XI դարի երկրորդ կեսին», (Մուշեղյան 1971, 47. 1983, 216–217. 1997, 44. ՀԺՊ 1976, 224): Հաշվի առնելով, սակայն, Բյուզանդիայի դրամաթողարկման սկզբունքները և առանձնահատկությունները, Անիի գտածոների մեծամասնության որակական հատկանիշները, գանձերի կազմը՝ որոնցում դրանք առկա են, ինչպես նաև այն, որ դրանց կեսից ավելին մինչև 1042 թ. հատված դրամներ են, կարծում ենք, որ հավանական չէ այդ դրամները տեղական թողարկումներ համարելը: Այլ հարց է ընդօրինակությունների, կոպիտ մշակմամբ և գրություններում սխալներով, համեմատաբար ոչ մեծաքանակ դրամների առկայությունն Անիում: Բացառված չէ, որ դրանք կարող են թողարկված լինել մայրաքաղաքում կամ վերջինիս հետ տնտեսական կապ ունեցող մոտակա քաղաքներից մեկում: Այդ դրամները, ամենայն հավանականությամբ, ի հայտ են եկել, երբ Անին գտնվում էր սելջուկյան գերիշխանության ներքո և շրջանառության մեջ են եղել մակադրոշմված բյուզանդական դրամների հետ միասին: Դրա վկայությունը կարող է լինել գանձերում բյուզանդական մակադրոշմված և ընդօրինակված դրամների միասին հանդես գալը (օրինակ՝ №1030 կարմիր պուլիկի և 06. №166 գանձերում)» (ատենախոսություն, էջ 132, ծան. 412):

Կարծում եմ՝ ատենախոսության հեղինակը հիմնավոր բացատրություն է ներկայացնում, որտեղ, ըստ էության, ամբողջովին չի մերժում վաստակաշատ դրամագետի տեսակետը, այլ նշում է դրա մասնակի հնարավորության հանգամանքների մասին: Իմ դիտողությունն այստեղ այն մասին է, որ նման

կարևորություն ունեցող հարցն ատենախոսության մեջ չպետք է ներկայացվի որպես ծանոթագրություն:

Նաև մի փոքր ճշտում անեմ՝ Անիում նշված է «Առաքելոց վանք» (ատենախոսություն, էջ 132-133), պետք է լինի «Առաքելոց եկեղեցի», որը քաղաքի եպիսկոպոսարանի եկեղեցին էր: Սրանք, իհարկե, մանրուք են:

Ատենախոսությունը ես համարում եմ լիովին հաջողված և գիտական նորույթ պարունակող: Այն ունի ինչպես հայագիտական, այնպես էլ բյուզանդագիտական կարևոր արժեք և, կարծում եմ, որ արժանի է նաև հրատարակության:

Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ամփոփելով՝ պետք է նշեմ, որ Հասմիկ Հովհաննիսյանի «Բյուզանդական X-XI դդ. պղնձե դրամները և դրանց շրջանառությունը Հայաստանում» թեկնածուական ատենախոսությունը, որը պաշտպանության է ներկայացված է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ, արժեքավոր գիտական ուսումնասիրություն է, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, իսկ ատենախոսության հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարեն Մաթևոսյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Մաթևոսյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

Մաշտոցի անվ. Մատենադարանի գիտական քարտուղար՝ Գաևե Թորոսյան

27. 04. 2021 թ.